

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին 4. Պարտք հար 8 ՄԷԸ
» Գաւառաց » 40 ՄԷԸ
վեցամսեայ 4. Պարտք » 4 ՄԷԸ
» Գաւառաց » 5 ՄԷԸ
Իւրաքանչիւր թերթի գին 60 փրկ
յանուցման առոյժ մէկ անգամի հաւ
շար 3 դուրուշ, երկու անգամի հաւ
շար 2 դուրուշ, աւելի անգամներու
համար զատ սակարկութիւն կը լինայ:



Լ Ր Ա Գ Ի Ր

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 23 ՅՈՒՆԻՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՎԵՐՁԻՆ ԼՈՒՐԵՐ

Փարիզ 31 յուլիս

Կառավարութիւնը պաշտօնական ծաւ
նուցադրով մը կը կշտամբէ փարիզի արք
էպիսկոպոսին վերջին կոնդակը, որ Ի
տալիոյ կառավարութեան կը դադի:

Ազգային ժողովն ստուար մեծամաս
նութեամբ ընդունեց իր նխաւերուն օ
գոստոս 6էն մինչև նոյեմբեր 30 դադա
րուելու և մերժեց ձախակողմանց այլ և
այլ առաջարկութիւններն՝ որք աղաւա
ման վիճակը վերցնելու կը նկատին:

Վերապի 31 յուլիս

Ազգային ժողովը մէջ արտաքին գոր
ծոց նախարար Պ. Տըքալ պաշտեց հան
րապետականաց, որ կառավարութեան
կողմէ փարլամենտը համակրութիւն ցոյց
տրուելու մասին ներկայացուցած հար
ցումին ետ առնուն:

Յետոյ ժողովն յետագային խնդ
րոյն վրայ վիճաբանեց: Հանրապետա
կանը կառավարութեան գործերը պար
տաւելով պաշարման վիճակին բարձու
խնդրեցին: Թաղաւորականաց ալ այս առ
թիւ իրենց գործերու տարտուծութիւնը վե
րապահեցին: Պահ մը մեծ յուզմունք ե
լաւ ժողովին մէջ: Յետոյ Սիսէ գորա
պետ խօսք ուղարկով յայտնեց թէ եօթ
նասեայ իշխանութեան ամբողջութիւնը
յարդեղ պիտի տայ:

Պաշարման վիճակը վերցնելու առա
ջարկութիւնը ըսէի դուրեւով, 3071 դէմ
376 ձայնով մերժուեցաւ:

Իրաւասական դժուարութիւնները
բաւական համար՝ Սթրասպուրկի և Մե
ցի թեմերը Պապին հրամանաւ վատիկա
նի անմիջական իշխանութեան ներքեւ
գրուեցան:

Լոնտոն 31 յուլիս

347,000 լիրայի նոր դուրաք մը հան
ուեցաւ Պանքային:

Վիեննա 1 օգոստ

Առողջապահական հանրապետական խոր
հարդոն հանդիսաւոր կերպիւ զոցեց իր
նիստերը: Կառավարութիւնը՝ հանրապ
ետական խորհրդին առաջարկութեամբ տե
րութեանց հետ բանակցելով՝ երկու դաշ
նագիր պիտի կնքէ, մին տարափոխիկ
հիւանդութեանց դէմ ձեռք առնուած
նախապահեաւ միջոցներուն միակերպու
թեան համար, միւսն ալ առողջապահա
կան հանրապետական միացուն յանձնաժո
ղով մը սահմանելու համար:

Բարսելոն 1 օգոստ
Բուսանիոյ Իփաքովիէ եպիսկոպոսը
պատրիարք ընտրուեցաւ:

Լոնտոն 1 օգոստ

Աւստրո-Հունգարիոյ կայսրուհին
Ուայթ հասաւ:

Երկուշաբթի օրը Պորտան պիտի գոյ
ուի տօնի պատմաւ:

Պերլին 1 օգոստ

Պիտարք իշխանն Սլաւոնիոյ ներկայ
կառավարութիւնը ձանձնելու վրայ կը բա
նուցի տէրութեանց հետ: Հաւանական է
որ իր ջանքը պիտի յաջողի:

Հոտմ 1 օգոստ

Սմիտս Զին Լոնտոնի փարիզի և Պը

րինտիզի մէջ ուղղակի բանող շողեկա
ռաց երթեկութիւն պիտի բացուի:

Պուրլի 1 օգոստ

Ձրոյց կայ թէ Սթուրա իշխանին Գա
րատաղի իշխանութեան ըով կատարելու
պաշտօնը չէ յաջողել:

Փարիզ 1 օգոստ

Սլաւոնիոյ ներկայ կառավարութիւնը
ձանձնելու խնդրոյն մէջ Գաղղիա ալ տը
րամաղիր է մեծ տէրութեանց բռնելը
ընթացքին ընկերակցել:

Պերլին 1 օգոստ

Սլաւոնիոյ ջուրերը զրկուած գերմանա
կան նաւախօսութիւն հրամանատարին տրուած
հրահանգները՝ մի միայն գերմանացեաց
կեանքն ու գոյքը պաշտպանել պարտք
կը դնեն իր վրայ:

Բուսիոյ կայսրը՝ Պ. Պիտարքի կենաց
դէմ փորձուած դաւաճանութեան ի դե
րե երկերուն համար խնդակցութեան նա
մակ մը գրեց անոր:

Փարիզ 2 օգոստ

Ճողովը վիճարկական ծախուց հաշ
ուեցոյցին ընտելութիւն աւարտեց:

Մոնպուէ յանձնաժողովը 16 աշուկոյժ
եան և 9 ձախակողման անդամներէ կը
բաղկանայ: Պետարքութեան բոլորովին
գուրա մնացած են:

Լոնտոն 1 օգոստ

Իմ Բօնա 44 1/16
Իմ 1863 —
» 1869 53 5/16
» 1871 64 1/4
» 1872 75
Սիզ Բօնա 92 1/16

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կայսերական հրամանաւ՝

Կ. Պօլսոյ ֆաղաքապետ վսեմ.
Ֆապուլի փաշան Սուլտանական գոր
ծոց նախարար անուանեցաւ փոխա
նակ վսեմ. Մահմաւ փաշային՝ որ
Ֆետական խորհրդոյ անդամ անուա
նեցաւ:

Հասարակային շինութեանց նա
խարարի Միլոթէշար Գատրի պէյ Կ.
Պօլսոյ ֆաղաքապետ անուանեցաւ:
Պաշտատի դաւաճութիւն երեւելինե
րէն Ե անսուր փաշան Պետական խոր
հրդոյ անդամ անուանեցաւ:

Թուեա լրագիրն յուլիս 17/29
թուով կըսէ թէ Պուրթէշի մէջ քու
նի մը հոգի քօլէուինէն մեռեր են.
և թէ Բուսանիոյ ձեռնհաս իշխանու
թիւնը առաջին առնելու համար
հարկ եղած միջոցները անօրինակ են:

Կիրակի օրը ցերեկին քանի մը
յանդուգն գողեր Բէրլէմիէ բաղա
րը դերձակի մը խանութ մանկելով
դանուած կերպաններուն ու շինուած
զգեստներուն մեծ մասը վերուցին:

Պենիպոլիէն դուրած նամակ մը
կը ծանուցանէ թէ քաղաքէն 20
ժամ հեռու Մէրիճ անուն քաղաքին
մէջ ժանտախտ երևան ելնելով և

անկէց Սլաւոնիոյ քաղաքն անցնելով
այս երկու քաղաքները զինուորա
կան շրջանակի մէջ առնուելու և դուրս
երնոյնը քսանօրեայ քառանթիւնա
յի ներթարկուել են:

Բէրլայի սատիկանութեան հաղա
րապետն հինգ շաբթի դիշեր Բէրլայի
ֆաֆէ Յըսմ բուռած գրօսարանին
սենեակներէն մին կոխելով, քանի
մը խաղաղողներ (գումարապաղ) բըռ
նեց և սատիկանութեան դուռը զըր
կեց:

Իլմիսի երկաթուղին վարչու
թիւնը մայրաքաղաքի կողքաց և
Մայլէթէի մէջ շողեկունաց երթե
ւեկութիւն մը պիտի հաստատէ, որք
շողեկունաց երթեւեկութեան ժա
մերուն պիտի համապատասխանեն:

Կըսուի թէ շաբթի օրը Պէյքօզ
կուի մը պատահել է վսեմ. Երու
համ պէյի կալուածոց մէջ բանող
2—3000 Պարսիկ և Պօշնաք գործա
ւորաց մէջ, և երկու կողմանէ մար
դիկ վիրաւորուել են. բայց սատի
կանութեան զինուորաց խումբ մը
վրայ հասնելով, յաջողեց և կուր
դադրեցնել:

Շաբաթ օրը Բուսէի երկաթուղ
եաց բաժիններուն վիճակահանու
թիւնը կատարուելով հետեւեալ թի
ւերը պարգև հասցեան.

Թիւ	Ձրանք	Թիւ	Ձրանք
440629	600000	45987	4000
158434	60000	773985	»
1243751	20000	875474	»
565072	»	323735	»
4967259	6000	975244	»
502606	»	4451769	»
1238461	»	4488173	»
613023	»	4667778	»
865175	»	4228043	»
1238463	»	452679	»
566240	3000	875472	»
227347	»	747494	»
620824	»	803203	»
325732	»	475371	»
875474	»	856408	»
4090802	»	502640	»
4409071	»	798826	»
430979	»	452793	»
452678	»	4619233	»
1396994	»	4914835	»
867744	»	4941870	»
227349	»	4743939	»
209565	4000	438495	»
430977	»	440627	»
4667779	»	278111	»

ՕՐԵՆՔ

ՕՍՄԱՆԵԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ ԳԱՆՁՈՒՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՇՈՒՆՈՅԻՆ (ՊԻՆՃԷ)
ՎՐԱՑ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՆ ՀՐԱՄԱՆՈՒ ՀԱՍՏԱՏԱՎ

(Դար ԿԵ ԹԵ 1557)

Յօդ. 9. Երեւոյն նախարարն ու
մեծ պաշտօնաւորանք իւր ԿԵ ԹԵ ԹԵ

ՊԱՅՄԱՆՔ

Գուրա գաղաժ լրագրաց հանդի
ծախքը խաղաղութեան վրայ:
Լրագրոյս վերաբերեալ նամակ
կամ որ եւ իցէ գրութիւն խաղաղի
— Տնօրէնին պիտի ուղղուի, Կ. Պօ
լիս, Չինիլի խան, Մաթիսի գրասեն
եակը:
Համար ծախքը չվճարուած նա
խակ չընդունուիր:

պիտի դրկէ, իւրաքանչիւրին համար
հաշուեցոյցին մէջ նշանակեալ դու
մարները գլուխ առ դուլիս և հատ
ուած առ հատուած ցուցնելով:

Յօդ. 10. Մէն մի պաշտօնատուն
երեւոյն նախարարութեան վերայի
եալ իւր ԿԵ ԹԵ ԹԵ մէջ նշանակուած
գլխոց և հատուածոց սահմանին մէջ
իր ծախքերը պիտի հոգայ՝ առանց
յատկացեալ տարեկան դուրսերն եր
բէք անցնելու:

Յօդ. 11. — Եւ և պաշտօնատուն
մը ինչպէս որ չկրնար ըստ նախըն
թաց յօդուածին իւր ծախքոց յատ
կացեալ դուրսանցին, նմանապէս
արդիւրած է իրեն ըստ առաջին յօդ
ւածին՝ առաջին ծախք մը ընել, թէ և
տէրութեան ընդհանուր հաշուեցոյ
ցին մէջ նշանակեալ հատուածից յա
ւելուածովը գոցուելու հաւանակա
նութիւն տեսնուի Սլաւ ամենայնիւ:

արտաքոյ կարգի պարագայից մէջ,
երբոր ստուգուի թէ անհրաժեշտ ե
ղած ծախք մը չկրնար առանց ծանր
անպատեհութեանց ետ հօսելու, կամ
թէ այն ծախքը կառավարութեան
կամ երկրին շահուն օգուակար է,
պէտք է որ կատարուի:

Եթէ հաշուեցոյցին նախատեսու
թեանէն դուրս և վերջ ցոյց տրուած
տեսակէն ծախք մը անհրաժեշտ
ձանշուի պաշտօնատան մը համար,
այն պաշտօնատունը պարտի պէտք
եղած ծախք ճիշդ գումարն և
պատճառները տեղեկագրով մը Բ
Դրան ծանուցանել:

Սլաւ տեղեկագիրը նախ հաշուե
ցոյցի յանձնաժողովին և ապա նա
խարարաց խորհրդէն պիտի ըննուի,
և երբոր յիշեալ ծախք պատճառ
ներն իրաւացի դատուին և հաւա
նութիւն տրուի, զայն գոցելու մի
ջոցները պիտի խորհուրէն, և այս մա
սին ընթացք գործաւ տեղեկագրով
մը կայսերական հաւանութեան պի
տի ներկայացուի: Երբոր կայսերա
կան հրամանագիրն ելնէ, վերայի
եալ ծախքը ներկայ տարւոյն հաշ
ուեցոյցին վրայ պիտի աւելնայ իր
ըւ յաւելուած, և ըստ այնմ պիտի
հրատարակուի:

Յօդ. 12. — Մէն մի պաշտօնատուն
իր ծախքոց յատկացեալ տարեկան
դուրսերն գործածութեան մանրա
ման հաշիւը պիտի շինէ և արդա
րացոյցի վաւերական թուղթերու
հետ որոշեալ օրայինաժաման մէջ
երեւոյն նախարարութեան պիտի
դրկէ: Եթէ պաշտօնատան մը ծախ
քերուն մէջ մէկ գլխին կամ մէկ հատ
ւածին միւսին ստակ անցած ըլլայ,
վերջնական հաշիւն տեսնող պատճառ
ները պիտի ցուցնէ:

Յօդ. 13. — Երբոր այլ և այլ պաշ
տօնատանց վերջնական հաշիւները
նախընթաց յօդուածին համեմատ
հետեւեալէն ձայնակարանի պաշտօն
հատարանը:

Նին, հաշուակալ ատենին պիտի յանձնուին. նոյնը պիտի բլայ նաև երու- միայն նախարարութեան վերջնական հաշիւներուն համար: Այս վերջին հաշուետուութիւնն հետ պիտի ներկա- յայտեն երկու ցուցակ, մին՝ ընդ- հանուր հաշուեցոյցին մէջ նշանակեալ տարեկան ընդհանուր հասոյթից ցուցակը, և միւսն ալ իւրօք գոյա- ցած հասուծից ցուցակը, ինչպէս նաև անոնց մէջ գոյացած յաւելում- ներն ու նուազումներն իրենց ստոյգ- պատճառներով:

Հաշուակալութեան ատենը ման- րամանաբար պիտի քննէ այն հա- շիւներն ու ցուցակները, և բոլոր եղած ծախքերն իրենց արդարացու- ցիկ թուղթերուն հետ բաղդատելով պիտի ստուգէ: Իւրաքանչիւր պաշ- տօնատան համարակալութեան տը- նօրէնն, ընդհանուր հասուծից հա- մարակալն և ուրիշ պաշտօնատարք որոց ներկայութիւնն հարկաւոր ըլ- լայ, պէտք եղած ժամանակ իրենց- մէջ հարցում տեղեկութիւնները տարւալով պիտի հրաւիրուին Մանր քըն- նութիւնէ մ'եւաւ՝ ընդհանուր հաշ- ուեցոյցին ձևով հաշուեցոյց մը պի- տի շինուի տարւոյն սկիզբը, և հա- սուծից ու ծախուց վերջնական հաշ- ուին մէջ գտնուած տարբերութիւն- ներն անոր մէջ ցոյց արուելով, ման- րաման և բացատրել տեղեկագրի մը հետ Բ. Դրան պիտի ներկայաց- ուին:

Յօդ. 14.—Հաշուակալութեան ատենին տեղեկագիրն ինչպէս նաև վերջնական հաշուեցուցակը նախ հաշուեցուցի յանձնաժողովէն և ապա նախարարաց խորհրդէն քննուելէ և անոնց հաւանութիւնն ստանալէ ե- տաւ՝ տեղեկագրով մը վեհ. Սովետ- նին վաւերացումներ պիտի ներկա- յայտեն, և պէտք եղած կայսերա- կան հրամանագիրն երևելէն ետեւ՝ ընդհանուր հաշուեցուցիցն պէս այն հաշուեցուցակն ալ հրատարակուե- լով երկուսից նախարարութեան պի- տի յանձնուի, որպէս զի համարակա- լութեան և արձանագրութեան օրի- նական պայմանները կատարուին:

Յօդ. 15.—Երկուսից նախարարու- թիւնը թէ՛ գանձուն ընդհանուր հա- սուծից մասնակարարութեան, թէ՛ իւր սեփական ծախուց, և թէ՛ ուրիշ պաշտօնատանց հաշիւներուն քննու- թեան մասին իրեն պատկանեալ պար- տուց կատարման համար պատասխա- նատու է: Նմանապէս ներկայ օրինաց արամագրութեան համեմատ իրեն յատկացեալ գումար գործածութեան և իր համարակալութեան գործողու- թիւններուն կանոնաւորութեան հա- մար պատասխանատու է:

Յօդ. 16.—Իւրաքանչիւր պաշտօ- նատան իրեն յատկացեալ հասոյթին ըստ իւրաքանչիւր դիւանի և հաւա- ճածոց գործածելու կարողութիւնն, ինչպէս նաև անոր պաշտօնէից պա- տասխանատուութիւններն և այլ և այլ վարչութեանց հետ ունեցած դը- բամական և հաշուական յարաբերու- թեանց պայմաններն յատուկ կանո- նագրութեամբ պիտի որոշուին:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԳՈՒԼԻՍ

ԵՍԱՍՏԸ ՈՒՍՈՒՄԻՆ

22 յուլիս երկուցարթի իրիկուն 48 23 1/2
23 յուլիս երկուցարթի աւառտ 48 23
Բացուցաւ 48 23 1/2
Կէս օր 48 23 1/2

Կ. Պօլիս 22 յուլիս

Սօսիթի մէջ լրացի բաժինք Անգլիկ 6
« Գիտականութեան » 4 5
« Գիտականութեան » 4 25
« Գիտականութեան » 9 25

Քրիստի Օսթրո-Թիւրք	—	—
Երկարութեան հին	3ր	407
»	»	80 1/2
Փոխ.	4863	» 345
»	4865	» 316
»	4869	» 265
»	4872	» 76 1/2
Թրամուէլ	Օսմ. լիր	5 80

ԸՆԹԱՅ ԳՐԱՄՈՑ 22 ՅՈՒԼԻՍ

Անգլ. լիր	409,25
Ն. օսմ. լիր	87 24
Իսթ. լիր	89,40
Գ. լիր	54, 25
Հինգ. փրանք	—
Հինգ. փրանք	104 35
Պրիմ	125

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

ՎԱՐՁԱԿԱՆ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆՔ

1. Աղբ. Հիւանդանոցի հոգաբար- ձութիւնն իր պաշտօնին դէմ ելած ինչ ինչ դժուարութեանց անմիջական բարձումը և կամ իր հրաժարակա- նին ընդունուիլը պահանջած և առ- այժմ նոյն դժուարութեանց անմի- ջական բարձումն անկարելի ըլլալով, Գաղ. Ժողովն ստիպուեցաւ նորա հը- րաժարականն ընդունիլ, և ընտրեց նոր հոգաբարձութիւն մը հետեւեալ 9 անդամներէն.

- Վսեմ. Յակոբ պէյ Պալեան
» Տօքթօր Սէրփիլէն էֆ.
» Յակոբ էֆ. Նորասուկեան
Մեծ. Մկրտիչ » Աղաթօն
» Յարութիւն » Մաքսուտեան
» Սինեքերիմ » Մանուկեան
» Խաչիկ » Ալեանագեան
» Տօքթօր Բեթիլպեան էֆ.
» Նիկողոս էֆ. Սուրբանեան .

2. Եկեղեցւորի թաղեցիք ոմանք ներկայանալով 48 ստորագրութեամբ բողոքագիր մը մատուցին, որով վեր- ջին օրերս կատարուած թաղ. խոր- հրդոյ ընտրութեան դէմ կը դան- դառնին ինչ ինչ ապօրինաւոր կէտեր մէջ բերելով:

Այս բողոքն ընտրողական ժողո- վոյ տեղեկագրին հետ Սահմանադ- րութեան գործադիր Յանձնաժողո- վոյ քննութեան յանձնել որոշուե- ցաւ, յայտարարելով նոյն թաղեցւոյ թէ ըստ վերջին հրատարակեալ որոշ- ման Գաղ. Ժողովն պէտք է բողո- քարկալ քրեանց Աղբ. առաքելն ե- թէ չեն վճարած ցարդ. 8 օրուան մէջ վճարեն կիւր. անտուկին, որ- պէս զի իրենց բողոքը նկատողու- թեան առնուի:

3. Բերալը կղզիի եկեղեցւոյ շի- նութիւնէն մնացած մեծագումար պարտուց ինքիւր վերջին օրերս ըս- տիպողական կերպարանք առած ըլ- լալով, Գաղ. Ժողովը նոյն պարտուց հետզհետէ վճարման համար առ- ալ- ժամ օրուց մայրաքաղաքի եկե- ղեցւոց մէջ իրիկի և տօն օրերը թաղայի պալատին տարի մը շարու- նակ, և անոր գոյացած արդիւնքը յիշեալ պարտուց վճարման յատկա- ցեն:

4. Փարիզի Մարտեան վարժա- րանի ինդոյն համար յանձնաժողով մը ընտրուեցաւ, որոյ պաշտօնը պի- տի ըլլայ յիշեալ վարժարանին հրի- տակը քննել, Սահման Մուրաւոյ կտակին համեմատ հաստատուած վար- ժարանին նկատմամբ Հայոց միջա- մրտելու կամ հսկելու մինչև որ առ- տիճան իրաւունք ունենան ստուգել, վարժարանին արդի վիճակին վրայօք պէտք եղած ծանօթութիւններն ըս- տանալով տեղեկագրել առ վարչու- թիւնն այն միջոցները որով կարելի

պիտի ըլլայ մեր իրաւունքները ձեռ. ք բերել:

Յիշեալ յանձնաժողովոյ անդամ ընտրուեցան,
Մեծ. Տիգրան էֆ. Նուստիեան
» Մկրտիչ » Աղաթօն
» Յարութիւն » Մէրէմուրլի
» Կարապետ » Իսթիֆեան
» Համբարձում » Իսթիֆեան
» Համբարձում » Արամեան
» Օղսէն » Խօնասարեան
» Մարկոս » Աղաթէկեան
» Թադէոս » Պէկեան
» Յակոբ » Պարօնեան
» Խաչատուր » Միսաքեան:

5. Ղալաթիոյ եկեղեցւոյ վագրօք- ներու և կալուածոց մատակարարու- թիւնն Աղբ. այնին նոր և կարևոր հաս- տատութեան մը պատճառաւ թաղ. խորհրդոյ պաշտօնէն զատել հարկ համարելով Գաղ. Ժողովն առ ժա- մանակեայ հոգաբարձութիւն մը ընտրեց նոյն պաշտօնին համար. իսկ թաղ. խորհրդոյ համար մինչև որ Ղա- լաթիա թաղ մը կազմուէր չափ ընտ- րող ունենալ կամ չունենալ ստուգ- ուի, առ ժամանակեայ խորհուրդ մ' ընտրեց, որոյ պաշտօնը պիտի ըլլայ եկեղեցւոյ ներքին հասոյթն ու ծախ- քը անտեսել առանձին անտուկով:

ՍՄԱՐՈՍԻՈՍ ՎԱՐՁԱԿԵՏԻՆ ԴԱՏԸ

Երբոր կողմնակցութեան հոգին աղբի մը վարչական մարմիններուն մէջ մուտ գտնէ, ալ այն աղբին մէջ օրէնք, իրաւունք, արդարութիւն ան- զօր և աննշանակ բառեր կը գտնուին: Այդ աղբաշէտս հոգին մեր երես- ժոխանութեան մէջ տիրելէն ետեւ, ստորակարգեալ ժողովոց և խորհրդ- ոց մէջ ալ մուտ գտնուին վրայ պէտք չէ դարձանալ:

Խորիման մը հարածելու համար՝ անոր թշնամեաց ամեն անկարգու- թիւններն ու յանցանքները պէտք է ծածկել և մինչև իսկ պաշտպանե- թէ և այդ պաշտպանութեամբ ար- դարութիւնը կոտնհարի, իրաւունքը կը բռնաբարի, կրօնքն ու բարոյա- կանը կանարգի, խիղճներ կը կըլնը- ռսովին ու կը գայթակղին:

Այս ակում խորհրդածութիւնն ընել կուտայ մեղ շարաթ առուր Ա- սիոյ մէջ Բերայի Սմբոսիոս վար- դապետին վրայ տեսնուած պաշտօ- նական գիր մը, որ Բերայի ոստիկա- նութեան ատենէն ելած է, և որոյ մէջ Սմբոսիոս վարդապետին ոչ թէ անպարտութիւնն, այլ յանցաւորու- թիւնն ակներեւ կը տեսնուի՝ հակա- ռակ աղբային խառն ժողովոյն առ- կէց ամիս մ'առաջ ըրած պաշտօնա- կան յայտարարութեան, որով յիշ- եալ վարդապետն անպարտ կը հը- րատարակուէր՝ ըստ արդեանց մի և նոյն ոստիկանական ատենին քըն- նութեան:

Մեք չենք մոռնել այն դայթակ- ղական մանրամասնութեանց մէջ, որք ոստիկանութեան ատենին քննութեան տեղեկագրին մէջ համառօտաւ նշա- նակուած են, և ուղղորդ կրնայ շարաթ- առուր Ասիոյ թիւթին մէջ տեսնել. միայն կը հարցնենք թէ Պատրիարքա- րանի խօսուն ժողովն ինչպէս կը համար- ձակի այնպիսի պաշտօնական յայտա- րարութիւն մը հանել, և կրօնի ու բարոյականութեան առջև պարտա- լոր անձ մը անպարտ հրատարակել Արարատ աշխարհի առջև:

Եկեղեցւոյ պաշտօնէի մը վրայ նշմարուած կամ դրուած դայթակ- ղական գործ մը, խղճմունքները չը վերաբերուէր համար ծածկել կամ հը- րապարակագրող չընել, խօսեմութեան գործ մ'է, զոր մեք ալ կը գովենք, և թէ ամբաստանեալ կամ մեղա-

պարտ եկեղեցականն առանց քըն- նութեան և առանց կանոնական ա- պաշխարութեան թող չարուի. բայց ատենք չընելէ զատ, երևել հրապա- րակաւ անպարտ հրատարակել, և- կեղեցեաց քարոզիչ կարգել, պա- տարագ ընել տալ և վերջն ալ կրօ- նական Ժողովոյ ընտրելեաց ցանկն անցունել որպէս զի կրօնական ժո- ղովոյ անդամ ընտրուի, այնպիսի տարօրինակ գործ մ'է, որոյ դէմ առ- մեն Հայ բողոքելու իրաւունք ունի:

Գաղ. Ժողովոյ անդամոց մին, ո- րոյ անկեղծութեանն ու անաչառու- թեան վրայ բնու. կասկած չունինք, ըսաւ. մեք թէ վարդապետին ձեռքն ալ գիր մը կայ, որոյ մէջ շարաթ ա- ռուր Ասիոյ հրատարակած պաշտօնա- կան գրոյն մէջ տեսնուած պարագա- ներն յիշուած չեն: Մեք կը հաւա- տանք Մեծ. Ժողովականին այս յայ- տարարութեանը. կը հաւատանք նա- և որ Խառն Ժողովոյ եկեղեցական և աշխարհական անդամներէն ոմանք, գլխաւորապէս Սրբազան նախագա- հը, Վսեմ. ատենապետ Սիմօն պէյ, Արդուման էֆէնդի և Մամիկոնեան Մեծ. Միքայէլ էֆէնդի, որոց ար- դարախօսութիւնն ու անկողմնակա- րութիւնը վաղուց կը ճանչնենք, այդ- պիտի գիր մը տեսնելով հաւատացեր և վերջիցեայ պաշտօնական յայտա- րարութեան հրատարակութեանը հա- լանութիւն տուեր են:

Բայց ներուի մեղ դիտել թէ այսպի- սի պարագայի մը մէջ վարչութեան պարագն էր գտնէ ուղղակի տեղե- կութիւն ինդրել ոստիկանութեան ատենէն, և այն պաշտօնական տե- ղեկութեան վրայ հիմնել իր որոշումն ու դատողութիւնը: Մեք չենք կըր- նար հաւատալ որ դատական առ- եան մը մի և նոյն դատի վրայ եր- կու կերպ կամ իրարու հակասական տեղեկութիւն տայ. նմանապէս չենք կրնար հաւատալ որ Ասիա՝ տեղու- թեան դատարանի մ' անոնով առտ կամ չինձու գրութիւն մը հրատա- րակելու յանդգնի:

Վերջապէս, ո'ր կողմ դառնանք, ո'ր կողմ նկատենք, խառն ժողովը ծանր պատասխանատուութիւն մը յանձն առած է աղբին և եկեղեց- լոյ առջև: Ժողովուրդը վերջին ծայր դայթակղեալ է շարաթ առուր Ասիոյ հրատարակութեան վրայ, և ամեն մարդ կը հարցնեն իրարու թէ մեր եկեղեցական կարգերն ու կանոննե- րը փոխուած են հիմա: Թէ եկեղեց- լոյ և եկեղեցականաց համար եկե- ղեցւոյ Ս. Հարց և մեր երանաշնորհ հայրապետաց սահմանած կանոնները վերցած են. կուսակրօն եկեղեցա- կանաց կենցաղաւարտութեան և ըն- տանեաց հետ յարաբերութեանց սահմաններն այն աստիճան ընդար- ձակուած են հիմա, որ ամուսնացեալ աշխարհականաց իսկ ներքի չեղած բաները կուսակրօն եկեղեցականի մը ներքի ըլլան, և կարենայ ոչ միայն ընտանեաց հետ սերտ յարաբերու- թիւն ունենալ, այլ և իր եղբոր նո- րատի. կնոջ հետ նստիլ երես, կա- տակներ ընել և անոր հետ առան- ձին սենեկի մէջ վախուիլ, և այլն և այլն, և դորձն այն աստիճան հաս- ցենել որ եղբայրը գայթակղելով բաժնուի կնոջմէն և եղբորը դէմ դատ բռնայ. իսկ այդ կուսակրօն վարդապետը, փոխանակ եկեղեցա- կան իշխանութեան դատուելու և եկեղեցական պաշտօնէ դադրելու, ընդհակառակն արձակ համարձակ Պատարագ ընէ, եկեղեցեաց քարոզիչ կարգուի, և ի վերջոյ կրօնական Ժո- ղովոյ ալ անդամ ընտրուի: Ըսել չէ՞ այս թէ յիշեալ վարդապետին այս

քննարկողը ոչ միայն ներքին է, այլ և արտաքին հարաբերակցությունները։ Այս և բնական է պարզապես թե՛ կուսակցության եկեղեցական պայտեզ պէտք է վարուին՝ որպէս զի պատիւ և յարգ. գանձն է։

Եթէ այսպէս է, թող կրօնական ժողովը այրէ ներկայ ժողովին կանոններն և Ս. Ներսէս Ենոթեանի Ընդհանրականը, և եկեղեցականաց՝ մասնաւորապէս կրօնաւորաց համար նոր կանոն մը սահմանէ վերոյիշեալ հիմանց վրայ, որպէս զի ժողովուրդն ալ գիտնալով չդալժակի։

Եթէ այս չկրնար ըլլալ, և եթէ Ստեփաննէ հրատարակուած իրողութիւնը սուտ չեն, ուրեմն Ամբոստիոս վարդապետն ալ կրօնական ժողովոյ՝ անգամ չկրնար ըլլալ՝ առանց եկեղեցական կանոններն առաջնորդելու։

Ամեն Ներսէս սրբազան, որ եկեղեցական կարգաց և կանոնաց պահպանութեան նախանձախնդրութեամբ ընդ և իր անբաժնաւ վարուքն առնեն ողջխոհ և կրօնաւոր ազգացնոց համարուած ու վստահութիւնը իր կրէ, պարտական է նկատողութեան առնուլ այս խնդրը, և գործը նոր քննութեան մ'ենթարկելով զայն ժողովութիւնը բաժնալ ի միջոյ։ Ենքն իբրեւ արքեպիսկոպոս Կ. Պոլսոյ և Պատրիարք Հայոց պարտական է քննել այս գործը. եթէ անմեղութիւն կայ՝ պաշտպանել, եթէ զըրպարտութիւն կայ՝ պատժել, եթէ կողմնակցութիւն կայ՝ մերժել և ժողովութեան խիղճն անգործել։

Այս է եկեղեցաց ճշմարիտ հովուապետի մը պարտքը, և մեք վրաստահութեամբ կրնանք բնութիւնը Ներսէս Սրբազանի գիտէ և կրնայ իր պարտականութիւնը կատարել՝ կրօնի և բարոյականի նուիրական շահը միայն ի նկատի ունենալով, կենսական շահ, որոյ առջև ուրիշ որ և է նկատուած նշանակութիւն չունի և չկրնար ունենալ։

Օրագիր իր երեկուան թուով քանի մը կանխահաս լուրերու հետ ծանուցած է նաև թէ Բագ. Ժողովը, խորմեան սրբազանի հաշիւն ու դատաստանը դեռ չտեսնուած, զայն Պոլսէն հեռացնելու և վարդապետութեանը զրկելու որոշում քրքրէ։

Ստոյգ աղբիւրէ կիմանանք որ այս լուրը սխալ է։ Բագ. Ժողովոյ անդամներէն օմանք այսպիսի առաջարկութիւն մ'ըրած են, բայց որոշում չէ տրուած, ոչ ալ խառն ժողովոյ խնդրաց կարգն անցած։

Պատրիարքարանէն հետեւեալ տեղեկութիւնը կը հաղորդուի մեզ։ Բաղրի Առաջնորդական Տեղապահ Սրբազան վարդապետին Պոլսի գարնան համար Բ. Դանիէն ասկէց առաջ քաշուած հեռագրական հրահանքն միայն Պատրիարքարանի Տեղապահներէն տեղեկութիւն խնդրած ըլլալով, այս անգամ եկած հեռագրէն կ'իմացուի թէ իշխեալ վարդապետը յուլիս 18ին բանտէն հանուելով անմիջապէս ճամբու դրուելու է Պոլսի դարձ համար։

23 յուլիս 1874 (Կնիք)
Ի Պատրիարքարանի Հայոց
Կ. Պոլիս

Ձեռնարկութիւն ՄԸ

Դամանակ է արդէն որ Հայերն ալ հասկընան թէ ԳԻՏՈՒԹԻՒՆԸ ԶՕՐՈՒԹԻՒՆ Է։ Արագ գին մէջն որ գիտութիւն չկայ, այսինքն լատիներէն գիտականներ չկան, այն աղքատ կարող չէ, յատկապէս իր կարող չէ քաղաքակրթ ազգաց հետ մրցել յաջողութեամբ, այլ կամայ կամայ անհոգ վարձկանն ու դերին կըլլայ։ Քաղաքակրթ ազգերը յետամնաց ազգաց կը տիրեն ոչ այնչափ զինու գորութեամբ որչափ գիտութեամբ, տիրելու կամ յաղթելու։

Թեյում Բիշոպը ինչ ալ լինի՝ հետեւեալը պիտի չեղնէ։ Սոյնինքն յաղթ ուղղին միասնա՝ Աշխարհ, պատերազմի դաշտ մ'է, ուր առաջ բազուկը յաղթող կը հանդիսանար, իսկ այժմ գիտութիւնը առաջ բազուկը գորաւորներն սրով կը խողովողին և շղթաներով կը կաշկանդէին իրենց հակառակորդները. այժմ գիտութեամբ զօրաւորներն իրենց հակառակորդներուն դէմ անթիւ մտաւոր զէնքեր կը գործածեն, որք ուրախ չուրէն և անզգալի, այնչափ ազգու են և գորաւոր։ Յետամնաց ազգ մը պատերազմի դաշտին վրայ գիտնալ կարենալու համար՝ միակ միջոց մ'ունի այն է իրեն դէմ գործածուած այդ մտաւոր նուրբ զէնքերն ուսումնասիրել, սեփականել և դանդաղ իւր մասնաւոր վիճակին յարմարցնել։ Դամանակ մը յետամնաց տէրութիւններ այդ նպատակին հասնել կը յուսային իրենց երկրին ու ժողովրդեան կենսական գործերու տնօրէնութիւնն օտարականաց ձեռք յանձնելով։ Բայց երբ զգալի կերպով հասկցուեցաւ թէ ազգ մը քաղաքակրթութիւն ուղիղ ճանապարհն այդ չէ՝ նոքա ալ սկսան շարունակել իւրաքանչիւր ամէն կողմերը հարեւրաւոր մարդիկ իրիկէ, որոցմէ իւրաքանչիւրն իրեն յատկացած մէկ գործը կամ գիտութեան մէկ ճիւղը կուսումնասիրէ, և վերադառնալով իր գիտութիւնը յօգուտ հայրենեաց կը դործադրէ։ Վարդական կամ ընկերական գործերու մէջ, Ամեն յետամնաց տէրութիւն կամ ազգ՝ այդ ճամբան ընտելու է, եթէ օտարականաց ձեռք խաղալի կամ դերի ըլլալ չուզեր։

Եթէ քննական հայեացք մը ձգենք Տեղապահութեան ճամբով վիճակին վրայ, զիւրին է տեսնել թէ անոր գիտաւոր պատահաւորէն մէկն ալ գիտութեան՝ այսինքն բանիւրուն գիտականաց սրկսութիւնն է։ Այդ պատճառաւ շատ կարեւոր և մեծ գործեր՝ կամ օտարականաց ձեռքն են՝ կամ անոնց ազդեցութեան ներքեւ կը տնօրինուին։ Արդ՝ եթէ Հայերը Տեղապահութեան մէջ և քաղաքակրթ ազգաց առջև պատուաւոր տեղ բռնել և նշանակութիւն ու ազդեցութիւն ունենալ կուզեն, եթէ կուզեն իրապէս բարոյել իրենց վիճակը, պէտք է ամեն ջանք ի գործ դնեն և առանց ժամանակ կորստելու փութան օտարական սղակի գիտական անձինք, որք կարողանան համառ և հեղինակութիւն ունենալ գիտական աշխարհի մէջ։ Համարուած ենք թէ քանի մը Հայ գիտականաց ազդեցութիւնն առեւելի կարող կը լինի մեր ազգին պատիւն ու նշանակութիւնը բարձրացնել թէ՛ Տեղապահութեան և թէ՛ նոյն իսկ իւրաքանչիւր մէջ՝ քան թէ որ և է արդէ միջոց։

Ահա այդ համարումը կ'ստիպէ զիս որ քանի մը տարիէ ի վեր ունեցած մէկ դէպք տարբերութեան իրադրութեամբ փութաւր ցնենմ։ Այդ գիտաւորութիւնն էր Եւրոպական քաղաքակրթութեան ազգաց, և զընտարապէս Զուլիցերից և Գերմանից Աղբ. բուստ որութեան և յատկապէս Թեյում միջոցներն ի մտոյ ուսումնասիրել։ Ուստի որդեգիր այս տարի օգոստոսի մէջ Զուլիցերիա ուղևորի՝ թէ՛ իմ գիտաւորութիւնն իրադրութեան և թէ՛ գիտականներն պատրաստելու մեծ գործին փութելի սկզբնաւորութիւնն մը ընելու համար։ Եւ ահա ինչ կերպով։ Ահի երկու (եթէ միջոց ունենամ և տեւի) տաղանդաւոր պատանի պիտի ընդունիմ իմ մօտ ճիւղաբար և գանձող տեղւոյ վարժարանները պիտի գնեմ, ընդհանուր ուսումըն աւարտելէ ետք՝ նոյնով իւրաքանչիւրն իւր ընդունակութեամբ համեմատ պէտք է բարձրագոյն վարժարանաց մէջ աւանդուած գիտութեանց որ և է մէկ ճիւղը ընտրէ և ինքզինքն բոլորովն անոր ուսմանը տայ մինչև որ պայն ինքնուրոյնաւորուի։

*Յուս է ինձ ազգային գործոց աստիճանի հետեւալը, մասնաւորապէս միջոցներն, բայց ապագային մէջ աւելի օգտակար ըլլալու յոյսը քաջալեր իրելով ինձ։ Դամանակ վարժարանին անդ որք և յուսալից որուի կը մեկնիմ, փասն զի ընդունակ և ձեռնհաս անձինք պիտի յաջողեն ինձ, և տարակույս չունիմ որ այդ օգտակար ազգային հաստատութիւնն սակիւ ետքն երթալով աւելի պիտի բարձրագոյն պաշտօնից անդ ուլ ջանիւքն ու ինտանակութեան յարատեւ հոգաւորութեամբ։

Բար մշակելու աստիճանին հասնի։ Գրաւոր եւս հոն ըլլամ՝ իմ՝ հոգեւորական և առաջնորդութեանս սակ պիտի դըռնուին, իսկ երբ վերադառնամ՝ յաջորդիս պիտի յանձնեմ գործը։

Այս սկզբնաւորութիւնն ընել կարեւոր և համար թողաւոր աշակերտը ևս պիտի ընդունիմ։ Առանձին վարժարան չպիտի հիմնեմ հոն, այլ տեղւոյն ազգային վարժարանաց հետ յարաբերութիւն պիտի հաստատեմ և իմ խնամոցս յանձնուած աշակերտներն անոնց մէջ պիտի գնեմ իբրեւ երթեկի աշակերտ։ Թէ՛ ճանապարհորդաց և դատաւորականց վկա, յուրիւններէն և թէ՛ մեր անձնականքն նուրիւններէն գիտենք որ մինչև անգամ Գերմանից և Զուլիցերից մասնաւոր գիտութիւն վարժարաններն հարուստ օտարականաց համար և շահու նպատակաւ բացուած ըլլալով՝ աւելի արտաքին փայլ կուտան իրենց աշակերտաց՝ քան թէ հիմնաւոր կրթութիւն և գիտութիւն, ուստի և չեն կարող օգտակար ըլլալ ազգային վարժարանաց չափ, որք թէ՛ աւելի հարուստ միջոցներ ունին և թէ՛ անդուր և արթուն հակողներու ենթոթիւած են որպէս հասարակութեան նշանակ և տեղութեան կողմէն։ Այդ պատճառաւ ահա մեզ յանձնուած աշակերտը ազգային վարժարանները պիտի գնենք և ոչ թէ մասնաւոր գիտութիւն վարժարանները։ Բայց ով որ ուզէ որ իր ազան անպատճառ մասնաւոր գիտութիւն վարժարան գնենք՝ միայն արտաքին հոգաւորութիւնը մեզ վերապահելով այդ ալ յանձն կ'առնուի։

Աւելի մանրամասն տեղեկութիւն ու գործերը թող յարեհաճին նախակ դեր ինձ ի Դամանակաւ վարժարան, 20 յուլիս 1874

Խաղաղ Զ. ԻՓԷԼԻԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՆՈՐ ԵՇԽԵՐՇԵԳՐՈՒԹԻՒՆ

Ի ՊԵՏԱՍՏՐՈՒՆ ՎՍԻՍՏՐՈՒՆՍ

Ի Գ. ԱՆԿԵՆԷ

Աշխարհի այլ եւ այլ մասերուն՝ մանաւանդ Եւրոպայի մէջ վերջին տարիներս պատահած քաղաքական փոփոխութիւններն հայերէն նոր աշխարհագրութեան մը պէտքն զգալի ըրած են։

Այս կարեւոր պէտքը լիովին լրացուցած է սոյն ընտիր աշխատասիրութիւնը, միանգամայն թուրքից վրայ ալ ընդարձակապէս տեղեկութիւն տալով, որ ուրիշ աշխարհագրութեանց մէջ կը պակսէր, եւ որոյ պէտքն ալ զգալի էր։

Հեղինակը, Գէորգ Էֆէնտի Առլանեան, որ Առլանեան Մեծ. Մանուկ Էֆէնտիի որդին է, Փարիզի Էքզիլանթրալ սոսուած մեծ վարժարանին մէջ ուսմունքն աւարտելով, քաղաքային երկրաչափ-ճարտարապետի (Էնժէնիէթ. Սիվիլ) վկայագիր ստացած, * եւ Կ. Պոլսի գաւառէն ետեւ հասարակային շինութեանց պաշտօնատես կողմէ Բուսթիլի երկաթուղիային շինութեան հսկելու պաշտօնով իւսկիւզ գնացած, և այժմ՝ Գիւսթինիէն 6 ժամ հեռու Բալուկա քաղաքը կը գտնուի նոյն պաշտօնով։ Մեծ. Գէորգ Էֆէնտի, իր այս ծանր զբաղմանց մէջ ազգին օգտակար ըլլալու հայրենասիրական պարտականութիւնն ալ չմոռնալով՝ այս ընտիր աշխարհագրութիւնը շինած է ի պէտս ազգային վարժարանաց, և հետեւեալ կարեւոր պակաս մը լրացուցած։

Կը գտնուի Մէրճանը Պաղտատար աղայի գրատունը եւ այլ գրապատասխան քով, Գին 2 1/2 ֆրանք։

* Էքզիլանթրալ մէջ ուսմունքն աւարտելով վկայագիր ստացող ուրիշ ազգային մը չենք ճանչեր մինչև քաղաք։

ՆՈՐԵՏԻՊ ՄԵՏԵԼՆ

ՍՏՈՒՆԵՐԻ ՀԱՅՅԱԿԱՆԷ

ԲԵՐԹՈՒՍԻՔ

Ի ԽՐԷՆ ԿԵՆԵԼԵՆԴԵՆԷ ՆՈՐ ՄԵՆ

Գեր. Խորէն սրբազանին բանաստեղծական հոսանքը ոչ միայն մեր ազգին՝ այլ եւ օտար ազգաց ալ քաջածանօթ է։ Վարդապետի ու Գրաւոր Պանդխտին իւր քերթածները դասուալ չայ գրականութեան ամենէն նշանաւոր գործերէն ըլլալը կ'վկայեն բանասէրը։

Այն հասարակներն գտած սիրաւոր բնութիւններ լինեն քաղաքաւոր մեք ալ միապաքէն հրատարակելի զեղեցիկ ապագրութեամբ ու ընտիր թղթով Ստուերը Հայկականքը։ որ աշխարհաբառ լեզուով ըլլալով, ու նիւթերն ալ բոլորովին ազգային, մեծ յոյս ունենք որ առաջիններէն ալ աւելի տնործելի պիտի ըլլան, իրենց տեսչ ու իւրաքանչիւրի լեզուով ու սրտաշարժ ու վառվառն ոճովը։

Մեծ. Ռոստիսեան Էֆէնտին այս գրքին մէջի քանի մը երգերը կ'արգելի, վկայած է թէ արցունքը չէ կրցեր բռնել։ Ու Հայկ անունով երգին համար ալ ըսած է թէ * Հայր Արսէնի Հայկ գիւցարեղութեան շատ աւելի կարճ է։

Ստուերը կ'ճամբուի մեր քով, Գինն է կէս արծաթ մեծիւ։

Կապաքեան Խորապետ

Կրամաճապ և Տպագրէչ

ԴՈՐՄԵՍԻԱՆ ԲԵՐՄԵՆՈՒԹԻՒՆ

ՅԻՍԵՍԵՆԷՆ ԼԵՃՈՒԻ

ՍԵՆ ԲԵՆԻՔ

Երկարեաց Թովմաս Էֆէնտի թէրգեան իւրապէս վարժարանաց մէջ քանի մը տարիէ ի վեր ընդհանուր ընդունելութիւնն դատած է այս նոր ոճով քերականութիւնն օտար լեզուաց ուսումը մեծ ապէս գիւրացներուն պատճառաւ։

Ամեն գրապատասխան քով կը գտնուի Գին 2 քառորդ արծաթ մեծիւ տիւն։

Դարձեցերու կամ դաւառաց համար շատ մ'օրինակ մէկէն տեսնուողներուն հետ զատ սակարկութիւն կըլլայ։

ԹԷՍՄԻՍԻ ԽՄԼԱՎԷ ԹԷՍԶԻՍԸ

ՏԵՐԳԵՐ

Այսինքն Գերմանիայի Տեղական Տեղապահ Բագ. Տեղապահ Գիւրգէնի պէթի Տեղապահն է։

Վաւերացմամբ Մեքարիքի։

Ի Մ. Գալուստ Թերեաքեանէ Ներկացուց։ Երժանութի Պարտաւոր, Գալաֆեան, Յրէնկիան Պաղտատարեան եւ Մարգարեան գրատուններն։

Գին 1 քառ թ արծաթ։

ՊԵՏԻՍ ՄԱՐԱԶՈՒՄԻՆ ԴԱՍԱՍՏԱՆԸ

ՏԵՐԳ Դ.

Կը գտնուի ամեն Հայ գրապատասխանաց եւ քաղաքաւորաւոր քով, Մասնաւոր փաշան Թահաթի Գ. Դանիէն կի խանութը եւ կամուրջի գիւղու պատասխան Գին իւրաքանչիւր տեղապահին 40 փարսյ։

ԵՕԴ

Իրեկճեան Մեծ. Համբարձում Էֆէնտին քիչ ժամանակէն Զուլիցերիա պիտի երթայ. ով որ տղայ կուզէ զրկել հոն, պէտք է որ առաջ իրեն իմացնէ։

ԴԱՆՈՒՅՈՒՄ

Հմուտ և փորձ հայկական մը շատ բաթը երեք կէս օր պարտաւոր ժամանակ ունենալով, պատրաստ է ազգային վարժարանի մը մէջ հայերէնի արամբանութեան և հոգեբանութեան դասախօսութիւն ընել։

Ուղղը լրագրոյս խմբագրէն կըրնայ տեղեկութիւն ստանալ։

Այս քաղաքը շարունակելով իր անհատական
հրապարակները, երկրորդական, հինգշաբաթ-
թիվը եւ շաբաթ օրերը, բաժանորդագրութեան
թիւն տեղերն են Կ. Պօլիս Զինկի խան
վերին խորհրդով ԼՍ Մարտի խորհրդատու
խոյն գաւառացի մէջ հետեւեալ հոգա-
բարձուաց սենեակները :
ԻԶՄԻՐ. Ստեփան աղա Տէպէկան.
ՆԻԿՈՒՄԻՆԻԱ. խորհրդով Լ. Ֆ. Լափիճեան.
ՊՐՈՒՅԱ. Ստեփան աղա Քանկէրեան.
ԹԵՔԵՐԵՍԱՂ. Յովակիմ աղա Ուղուհ-
արդեան :
ՏՐԱՊԵՆՈՆ. խաչատուր աղա Նիմասեան
ԿԱՐԻՆ. Կարապետ աղա Ստեփան.
ՎԱՆ. Կարապետ աղա Նաթանեան.
ՄՈՒՏ. Մկրտիչ աղա Փօթիկեան.
ԵԱՇ. Մ. աղա Սափիկեան.
ՅՈՒՅԵԱՆ. Մկրտիչ աղա Սէֆեան.
ՀԱԼԷՊ. Նիկողայոս աղա Տէր Մար-
գարեան.
ԵՐԶՐԱՅ. Թադէոս աղա Բաղրա-
տունի.
ՍԻՎԻՆԻՍՏԱՐ. Կարապետ աղա Վար-
դանեան :
Ուրիշ քաղաքներէ ստորագրողն ու-
ղողներն այս տեղերէն մէկուն հետ կրնան
միջակցել :

ՓԻԼՈՒՆ ԵՐԶՐ



Այն անձինք որք Տօք-
թօք Տօքի մաքրողական հա-
տաղելիքը կը ծանօտն, պէտք
ունենան տանիներն գործածե-
լու չեն վարանիր : Վասն զի ոչ անսխորտ
համ ունի, ոչ ալ կը յոգնեցնէ ուրիշ մաք-
րողական գեղեցիկ տէս, ընդհակառակն՝
այս հատաղեղն տ'յն ժամանակ միայն լու-
սաղեցեալ լինէ կընէ երբոր անդարար կե-
րակրոց եւ զօրացողիւ բնականայ : Այն է
գլխիկ, խաչաճիւղ թէ՛ն հետ առնուի Ստե-
փան իրեն յարմար դատած ժամն ու ճա-
շը կրնայ ընտրել ինքզինք այս դեղով մաք-
րելու համար : Կարծես թէ յոգնեալ լինելը
բարձրագոյն ոչնչանալէ ետեւ՝ ուղղել կրնայ
վերադառնալ սկսել օրէկու անհամ եւ պէտք
ըլլայ :
Այս հատաղեղը կը ծախուի 2 լ. եւ
3 ֆրանքնոց տուփերով փարիզ Տօքթօր Տօ-
քի տունը եւ Կ. Պօլիս Տէլլա-Սուսայի
Վէլիցի, Զօպանդուի եւ Եմանիի գեղա-
րանները :
Ամեն մէկ տուփի հետ պէտք պահան-
ջել նաեւ 72 երեսէ բաղկացեալ փոքրիկ
գիրք մը որ ամեն լեզուով հրահանդներ կը
պարունակէ :
Ասոնց հետ կրնայ ուղարկել նաեւ Տօք-
թօք Տօքի 400 երեսէ բաղկացեալ առ ձե-
ռագրքոյնը :

ԽՍՐԱՎԻՐ—ՏՆՕՐԷՆ
Կ. Ս. ԻՆՏԵՆՍԻՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՅ
Կ. ՊՈԼԻՍ ԶԻՆԿԻ ԽԱՆ



ԿԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԳՐՈՅ ՓԱՐԻԶԻ
Ս. ԲԵՆԻՔԷ ԵՔԱԳՐԱՄ
Ե. ԿԻՏՕ
ԿՈՒՊՐ (ԳԱԹՐԱՆ) ԿԻՏՕԻ
ՀԵՂԱՅԻ ԹԱՆՔԱՐԱՅԵԱԼ



Պ. Կիւլո յաջողեցաւ. Կուպրին անտանելի դառնու-
թիւնն ու կծուութիւնն անհետացնելու : Եւ խիստ զիւրա-
ւոյժ ընելու : Այս յաջող գիւտն օգուտ բաղկաւ՝ Կուպրի
թանձր հեղուկ մը կը շինէ : Եւ փոքր քանակութեան մէջ
բազում ներդրողն սկզբունքը կը պարունակէ : Ուստի Կիւ-
լոյ կուպրը հասարակ կարաջութիւն ամեն օգուտներն ունի
աւանց անպատեհութիւններն ունենալու : Բաւական է
սուրճի դեղ մը լցնել դաւաթ մը ջուրի մէջ, եւ գերա-
զանց կարաջութիւն մը ձեռք կը բերուի առանց անսխորտ հա-
մի : Սյս կերպով ամեն մարդ կրնայ ինքնին կարաջութիւն չի-
նել պէտք եղած միջոցին, ուղղակի չափ թէթեւ կամ դո-
րաւոր, որով թէ՛ ժամանակի խնայութիւն, եւ թէ՛ փո-
խադրութեան դիւրութիւն կուտենայ, եւ Կուպրի անհա-
նոց դործածութեանն ալ աղատ կը մնայ :

Կիւլոյ կուպրը, հարուստի թոքառաջից հիւանդու-
թեան (պրոնչիթ), հազի եւ այլ լանջոյն հիւանդութեանց
մէջ ուրիշ ամեն հեղուկ դեղերու տեղն օգտակարապէս կը
բռնէ : Համաճարակ հիւանդութեանց ժամանակ ալ քօթ-
ուայի, փորքուտութեան, տենդի եւ ուրիշ այս տեսակ հի-
ւանդութեանց դէմ շատ օգտակար ըլլալը մասնաւորապէս
վիսյուած է բժիշկներէն :

Վերջապէս մեծ յաջողութեամբ կը դործածուի

ԹՐԱՍՏԱՅԻՆ ՀԻՄՆԵՐՈՒԹԵԱՆ

ԹՐԱՍՏԻ

ՀՍՐԲՈՒԹԻ

ՀԱԶԻ

ԿՈՒՐԾԻՐ ԳՐՈՒՈՒԹԵԱՆ

ՓՈՂԻ ՀԻՄՆԱԿՈՒԹԵԱՆ

ՓԱՄՓՈՒՇՏԻ ԳՐՈՒՈՒԹԵԱՆ ԴԵՄ :

Ամենին առաջ Պրիւսիայի եւ յետոյ ամեն տեղ եղած
փորձերէ հաստատուած է որ Կուպրը թոքառաջ եւ թոքա-
ռաջից հիւանդութիւն ունեցողներուն խիստ օգտակար է :
Թոքառաջը չբժշկելու, բայց հիւանդներուն մեծ ախտաւոր
եւ հանգստութիւն կուտայ : Կանոնը հոգեւոր հազը կը
դադրեցնէ, եւ շատ անգամ հիւանդներուն կեանքը կեր-
կընցնէ : Այսպիսով միայն բաւական է հիւանդաց ուղադ-
րութեանն արժանի ընելու այս դեղը : Բայց պէտք է լու-
համոզուիլ : որ այս դեղը մասնաւոր հիւանդութեան նոր
սկսած ժամանակը պէտք է դործածել : Թեթեւ հարուստ
մը կրնայ թոքառաջից հիւանդութեան փոխարին այս պատ-
մը կը հազար սկսեալուն պէս այս դեղը պէտք է
առնու, որպէս զի աւելի օգուտ քաղէ : Կուպրի տեղադրու-
թիւնն ունեցողներէն շատերը կրծախտ ունենանքն չեն
դիտելու եւ շատ անգամ ինքզինքնին հարուստ կամ թեթեւ
դիտելու :

Թոքառաջը ունեցած կը կարծեն երբոր թոքախտ արդէն
սկսած է :

Փարիզի Եօթն հիւանդանոցաց, ինչպէս նաեւ Պրիւ-
սիայի, Վիէնայի եւ Նիդերլանդ մէջ Նիւյօի կուպրով փորձեր
եղան եւ խիստ յաջող եղան :

Ահաւասիկ բժշկական Սքոթլենդ քաղաքին մէջ Տօքթօր
Ֆէլքսթըր քրտած դիտողութիւնները :

«Պրիւսիայի մէջ Պ. Տ. . . 47 տարեկան, Եօթն տարիէ
ի վեր թոքառաջից հիւանդութիւն ունենալով, վերջին
ծայր տկարացած էր : Գեղեցիկ ձանձրացած ըլլալով, մեծ
դժուարութեամբ յոնձն առաւ Կիւլոյ կուպրը փորձել,
Քանի մ'առաւ մէջ մարտդական դորութիւնն անթնցաւ,
հազը քիչցաւ, եւ վեց շաբաթ դարմանէ ետեւ բոլորովին
դադրեցաւ : Երեք ամիսն ալ կատարապէս բժշկեցաւ : Պ.
Տ. . . մինչեւ հիմա կը դործածէ այս դեղը, եւ երբեք կընէ
որ բնաւ չպիտի թողու :

Գարձեալ :

«Պ. Չ. . . 35 տարեկան, չորս տարիէ ի վեր թոքախտ
եղած էր, բերնէն յաճախ եւ առատ արիւն եկած էր,
վերջապէս մահամեծ վիճակի մէջ էր : Կիւլոյ կուպրը առ-
ւել, եւ կարծես հաշտ դործեց հիւանդիս վրայ : Տարիէն
աւելի է որ կը դործածէ, եւ հազը զրեթէ բոլորովին դադ-
րած է : Չեմ ըսեր որ այս դեղը Պ. Չ. . . ի թոքախտը կա-
տարեալապէս պիտի բժշկէ, բայց տարակոյս չկայ որ անոր
կեանքը պիտի երկարեցնէ :

«Պէտք է աւելցնել, որ Կիւլոյ կուպրին դործածու-
թիւնը շատ սպառնալից է մէջ ուրիշ բուսական տարե-
ղանքներ դործածելու հարկ չի սպառ :

Կիւլոյ կուպրին ամեն մէկ շնորհ կրնայ տասնեակու-
թիւնի չափ կարաջութիւն չինել :

Ա. Զ. Գ.

Կիւլոյ կուպրին շատ ծախուիլ որ իր օգտակար յատ-
կութեանց ապացոյց մ'է, բազմաթիւ նմանողութեանց եւ
խաղաղախաղ բազադրութեանց առիթ տուած է, ինչպէս
որ բազմաթիւ ճարտար քիմիադործներու քննութիւններէն
հասկոյնած է :

Չուզելով բարդական պատասխանատուութիւն մը վը-
րաս բերել, որ ինձ չվերաբերիլ, կը յայտնեմ թէ ես մի
միայն իմ շինած բազադրութեան հարապատութեանն ու
լաւութեանը կ'երախտաւորեմ : Ուստի գնողները պէտք է որ
չլինին վրայի կանանց պիտակին եւ անոր պարանոցին փաթ-
եալ ստորագրութիւնը ստանա-
լին :

L. Guyot

Կը դանտի Բէրա եւ Կ. Պօլիս Գանդիւք եղբարց,
Վէլիցի եւ Գաւառեանի գեղարանները :

NORTH BRITISH AND
MERCANTILE
INSURANCE COMPANY

ՆՕՐԹ ԳՐԻԹԻՆ ԵՆ ՄԵՐԿԵՆՏԻԼ
ԼՆԻՐԱՅԻ Ե ԼՆԻՐԱՅԻ ԿԱՐԱՅԻՆԵԱՆ
ԸՆԴԵՐՈՒՄԻՆ ԱՆԷ. ԼԵ.
Բաժանորդագրեալ գումար լուր 2,000,000
Վճարեալ գումար լուր 250,000
Պահեստի գումար հրաժ. Կ.
Հի ճիւղին գումար լուր 596,000—846,000
1872ին հրդեհէն զուտ հոսոյթը 794,000

NORTHERN
ASSURANCE COMPANY

ՆՕՐԹ-ՆՕՐՆ
ԼՆԻՐԱՅԻ Ե ԼՆԻՐԱՅԻ ԿԱՐԱՅԻՆԵԱՆ
ԸՆԴԵՐՈՒՄԻՆ ԱՆԷ. ԼԵ.
Բաժանորդագրեալ գումար լուր 2,000,000
Վճարեալ գումար լուր 100,000
Պահեստի գումար հրաժ. Կ.
Հի ճիւղին գումար լուր 250,000—550,000
Զուտ հոսոյթը 1872ին 270,000

Ստորագրեալ Լ. Ե. իրենց բազմաթիւ յաճախորդաց եւ այս քաղաքի ընդհանուր
հասարակութեան կը ծանուցանեն որ իրենք վերադառնալ երկու ընկերութեանց մի-
ացեալ գործակալար քննարկած ըլլալով, այնպիսի գումար լուր մէջ կը պահուին,
որով հրդեհի դէմ ապահովութեան մեծ դիւրութիւններ կը մատուցանեն :
Ապահովութեան կարգադրութիւնները կը բաղկանան երկու ընկերութեանց
մէջ համեմատական բաժանումով, մը, եւ այսպէս ապահովութեան եւ դիւրութեան
աւելանալով, ընկերութիւնն ալ կրնայ աւելի մեծ աղ ու մար ապահովութիւնն բը-
նադարաւ ինքզինք ներկայացունել :
Գրեթէ ամեն կարգի փոխադարձ ապահովութիւնը կրնան ընդունուիլ ինչպէս
այլ Գալլիքի եւ Պօլսի մէջ նոյնպէս մատակար քաղաքները զիւրերը եւ դա-
տաները :
Գրեթէ ամեն եւ աւելի մանրամասն տեղեկութեանց համար պէտք է դիմել Մի-
ացեալ ընկերութեանց գրասենեակը Գալլիքի Բէրա եւ Կ. Պօլիս Գանդիւք
խան թիւ 5 :

Վ. Ո. ՍՈՒՍԵ ԱՏՐԱՆՍ ԳԻՐԵՆ

ԼԱ. ԺԻՐՈՆՏ

ԱՊՍՏՈՎԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՀՐԵՀԻ, ԿԱՐԿՈՒՑԻ ԵՆ ԱՆԱՄՈՑ
ԿՈՏՈՐԱՅԻ ԴԵՄ

Կապահովէ, առեւեր, կարաւներ, վաճառանոցներ, վաճառ. քներ
եւ ուրիշ եւալիս, մինչեւ անգամ փայտէ շէնքեր հրդեհի դէմ եւ անասնոց
կոտորածի դէմ, չափաւոր դնով եւ չափաւոր պայմաններով թէ՛ Կ. Պօլսի
եւ թէ թուրքի գլխաւոր քաղաքացի մէջ, Վիստ մը պատահած ժամանակ,
ստորագրեալն անմիջապէս կը կատարէ ճշգրիտ եւ ուղղութեամբ բոլոր
յոնձն առած պայմանները :
Աւելի մանրամասն տեղեկութեան համար պէտք է դիմել առ
Ընդհանուր Գործակալ Թոքառաջ Կ. Պօլսի
ԱՂԵՔԱՆԳՐ ԲԵՔԱՅԵՐ Ի ՊԱՏՃԵ ԳԱՐՈՒ

LLOYD SUISSE
ԼՈՅՏ ՍՈՒՍ

Ապահովութեան ընկերութեան ցամաք ծովային եւ ցեղեկաց արքայ Գանդիւք
Կ. Պօլսի
Ի ՎԻՆԹԻՐԻՐԻՐ
Կապահովէ վաճառք, գրամ եւ ուրիշ, ծովային եւ գետի վրայ կարողական
Հիւրանալիս եւ Օսմանեան շողանալներով եւ առաջատանաւերով եւ
ցամաքի վրայ ալ երկաթուղիներով փոխադրելու փոխադրացի դէմ ինչպէս
նաեւ բոսթայով ամեն կողմ զրկուած լեցուն նամակներ եւ ծրարներ :
Աւելի մանրամասն տեղեկութեան համար պէտք է դիմել առ
Ընդհանուր Գործակալ
ՀԵՐՄԱՆ ՀԵԼՊԵՆԿ
Ի ՎԱՅՈՒԹԻԱ
ԱՂԵՔԱՆԳՐ ԲԵՔԱՅԵՐ
ՊԱՏՃԵ ԳԱՐՈՒ